Աստուածատուր սարկաւագի կախումն են մատնանշում Թորոսից ընդհանրապէս, որ հաստատ որոշել չենք կարող թէ ո՞ր Զ–ից, հաւանօրէն Զէյթունի աւետարանից, որից տարբերաբար լուսանկար չունինք ձեռքի տակ այս ենթադրութիւնը ճշդելու համար: Սակայն տարբեր են Աստուածատրի աւետարանիչներն ու նրանց սկզբնաղբիւրները: Աստուածատուր սարկաւագն էլ ոչ պակաս նշանաւոր եւ նուրբ մանրանկարիչ է, միայն ձեռագիրը վատ է պահուած, անկիւններից աւրուած ու կեղտոտուած շատ տեղերում: Աստուածատուրը, դուցէ, եւ Հռոմկլայի դպրոցի աշակերտ է, թէեւ չի յիշում այդ մասին, որովհետեւ նմանութիւններ ունի Թորոսի այլ եւ այլ Ձեռագիրների մանրանկարների հետ:

* * *

Ռոսլինի վեցերորդ գործը ժամանակագրական կարգով եւ Կոստանդնի չրջանի տասն եւ երկուերորդը Երուս. No. 2027 Մաշտոցն է 1266 թուին գրուած Աւետիք դրչի եւ նկարազարդուած Թորոսի ձեռքով, ստացմամբ Վարդան եպիսկոպոսի, որ տեսել եւ նկարագրել ենք 1911 եւ 1935 թ.թ. Երուսաղէմում: Ցիշատակարանից տեղեկանում ենք, որ գրչութիւնը «Աւարտեցաւ յամի եօթն հարիւր եւ հնգետասաներորդի թուականութեան Հայոց ի հռչակաւոր եւ ի թագաւորական քաղաքն Սիս կոչեցեալ յաշխարհին Կիլիկեցւոց ընդ հովանեաւ աստուածաբնակ տաճարին, որ յանուն սրբոյ Աստուածածնին ի հայրապետութեան տեառն Կոստանդեա... եւ ի ժամանակս աստուածասէր արքային Հեթմոյ մեծ երախտաւորի ամենայն սեռից Հայոց եւ ազգաց բազմաց»:* Վերջին տողերը ակնարկութիւն են Հայոց եւ Ասորոց բարի յարաբերութեան, քրիստոնէից համար ստացած պաշտպանութեան թաթարների ընծայած դիւրութիւններով, որոնց մասին պատմում են Գանձակեցին եւ Վարդան:

Ձեռագրի ստացող Վարդան եպիսկոպոսը գտնւում էր Հռոմկլայում «մեծարեալ եւ սիրեցեալ... ի սրբոյ հայրապետէն տեառն Կոստանդեայ Կաթուղիկոսէ, որով եւ ի մեծապատիւ եպիսկոպոսութեանն աստիճանի կոչեցեալ եղեւ ի նմանէ: Եւ զայսու ժամանակաւ սպասաւորէր հայրապետական սուրբ աթոռոյն, որ յաստուածաբնակ դղեակն Հռոմկլայ, որ եւ ետ վայելչուցանել զսա ոսկւով եւ զանազան նիւթով բազմամեղ գրչին Թորոսի, գրեալ ձեռամբ Աւետիք քահանայի»: Քաղուածօրէն այս տեղեկութիւններից պարզ է, որ Մաշտոցը գրուած է Սսում Աւետիք նշանաւոր գրչի կողմից եւ նկարազարդուած Հռոմկլայում, ուր ապրում էին ստացող Վարդան եպիսկոպոսը եւ Թորոս Ռոսլինը: Անհաւանական չէ, որ այս Վարդան եպիսկոպոսը նոյն լինի Զէյթունի 1256 թուի աւետարանի յիշատակարանի մէջ յիշուած «կուսակրաւն քահանայն Վարդան փակակալ ածընկալ տաճարացս եւ կազմաւղ սորա», որ տարիներից յետոյ Մաշտոցի ստացման ժամանակ արդէն եպիսկոպոսութեան աստիճան էր ստացել:

Մանրանկարչութեան եւ գրչութեան հետ կապուած զարդագրութեան ուսումնասիրութիւնը պարզում է երկու առաջնակարգ արուեստագէտների բերած բաժինները այս Ձեռագրի մէջ: Գրչութիւնն ամբողջապէս Աւետիս քահանային լինելով, նորանն ենք համարում ընծայականի հետ եւ բնագրին անմիջապէս կապուած զարդագրութիւնը: Ընծայականի 61բ. եւ 86բ. (Պատկ. 14 եւ 15) բոլորովին այլ ոճ ունին, քան Թորոս Ռոսլինի աւետարանների խորանները, այդպէս եւ մանրանկարչական տառերի եւ սկզբնազարդերի կամ լուսանցքի զարդերի արուեստը: Պատկեր 16 (8բ.) եւ 17 (40ա.) ապացոյց են այդ իրողութեան, գաղափար տալով եւ Աւետիքի գրչութեան եւ արուեստի մասին: Այս Աւետիքն է գրել նաեւ Լեւոն Գ.–ի եւ Կեռանի թագադրութեան առթիւ գրուած եւ նկարազարդուած աւետարանը, որի մասին, քիչ յետոյ:

Ընծայականի բնագիրն է՝

61բ.

Իմաստութեն հաւր երկն
աին՝ որ զչնորհս ածին
ետուր բնութե մարդկային
ըստ խորհրդեան աշտիճանի
Դու Վարդանա հաւտապետին
Այսմ տառի ըստացաւղին՝
Շնորհեա դասիլ յառագաստին
Ընդ Պետրոսեան սբ երամին

86բ.

Որ նուիրեաց զնիւթ տառի
Քեզ տր հանուրց պարգեւողի
Դու զտր Վարդան հովիւ բարի
Եպիսկոպոս եւ բարունի

*Համառօտ նկարագրել է եւ յիշատակարանները մէջ բերել եւ Մեսրոպ եպիսկոպոս. Ազգ. Հանդ. XXIV. եր. 73–74: